ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

1. Հիմնական դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Եվրոպական համալսարանում (այսուհետ՝ ԵՀ) ակադեմիական ազնվության սկզբունքները, ակադեմիական անազնվության հիմնական ձևերը, գրագողության հիմնական ձևերը, ակադեմիական անազնվության դեպքում սահմանվող պատժամիջոցները:

1.2 Սույն կանոնակարգի համար հիմք ծառայեցին «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ԵՀ կանոնադրությունը, ԵՀ էթիկայի կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

1.3 Ակադեմիական ազնվությունը ԵՀ գործունեության բոլոր ոլորտներում ազնվություն և բարեվարքություն ցուցաբերելն է, ներկայացվող աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակների ներկայացումը, իրական հետազոտությունների, վերլուծությունների վրա հիմնված արդյունքների ներկայացումը, մտավոր սեփականության սկզբունքների կիրառումը:

2. Սույն կանոնակարգի նպատակն է.

2.1 Ապահովել ակադեմիական ազնվության սկզբունքների իրականացումը և կանխարգելել ակադեմիական անազնվության հնարավոր դրսևորումները համալսարանում,

2.2 ԵՀ-ում ստեղծել ազնվության, արդարության, թափանցիկության և անկողմնակալության մթնոլորտ,

2.3 Նպաստել որակի բարելավմանը,

2.4 Ակադեմիական ազնվության սկզբունքների իրականացման անհրաժեշտ պայմանների ապահովում,

REGULATION
ON ACADEMIC INTEGRITY AT THE EUROPEAN UNIVERSITY

1. General provisions

1.1 This Regulation defines the principles of academic integrity at the European University (hereafter referred to as EU), the main forms of academic dishonesty, the main forms of plagiarism, and the academic sanctions imposed in case of academic dishonesty.

1.2 The RA Law on “Education”, the EU Charter, the EU Ethics Regulation and other legal acts serve as the basis for this Regulation.

1.3 Academic integrity is to manifest honesty and decency in all areas of the EU, present the real authors of thoughts and ideas in the presented works, present results based on real research and analysis, and apply the principles of intellectual property.

2. The goals of this Regulation are:

2.1. To ensure the implementation of the principles of academic integrity and to prevent possible manifestations of academic dishonesty in the university,

2.2. to create an atmosphere of honesty/integrity, justice, transparency and impartiality at the EU,

2.3. to contribute to quality improvement,

2.4. to ensure the necessary conditions for the implementation of the principles of academic integrity,

2.5 Ակադեմիական անազնվության կանխարգելում:

3. Ակադեմիական անազնվության հիմնական ձևերն են.

3.1 *Արտագրություն* – այլ ուսանողի աշխատանքը որպես սեփականը ներկայացնելը, քննության ընթացքում արգելված նյութերից, բջջային սարքերից օգտվելը, հուշումը և այլն,

3.2 *Խաբեություն* – Դասախոսին կամ ԵՀ այլ ստորաբաժանումների աշխատակիցներին կեղծ տեղեկության տրամադրումը հանձնարարված աշխատանքների կամ անձնական տվյալների վերաբերյալ,

3.3 *Տեղեկատվության կեղծում* – ակադեմիական հանձնարարությունում տվյալների, տեղեկատվության կամ հղումների կեղծում (հնարած մեջբերումներ, կեղծ հղումներ), փաստաթղթերի կեղծում՝ շահույթ ստանալու նպատակով:

3.4 *Գաղտնի համաձայնություն* – Դասախոսի կամ այլ ուսանողի հետ համաձայնություն, որի արդյունքում անարդարացի առավելություն կամ արտոնություն է տրվում որևէ աշխատակցի կամ ուսանողի և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա, նպաստում աշխատանքի անբարեխիղճ իրականացմանը:

3.5 Գրագողություն, տե՛ս սույն կանոնակարգի 4-րդ կետը:

4. Գրագողություն

4.1 Գրագողությունը այլ հեղինակի(ների) մտքերի, գաղափարների, հետազոտությունների, մտավոր աշխատանքների մասնակի կամ ամբողջությամբ կրկնօրինակումն է և դրանք որպես սեփականը ներկայացումը, առանց մեջբերելու հեղինակի անունը կամ սկզբնաղբյուրը

4.2 Գրագողության հիմնական ձևերն են՝

2.5. to prevent academic dishonesty.

3. The main forms of academic dishonesty are:

3.1. *Transcription* - presenting other student's work as one's own, using prohibited materials, using mobile devices during the exam, prompting, etc.

3.2. *Fraud* – providing false information to the academic staff or employees of other units of the EU regarding assigned work or personal data.

3.3. *Falsification of information* - falsification of data, information or references in an academic assignment (fictitious quotations, false references), forgery of documents for profit.

3.4. *Secret agreement* – an agreement with a representative of the academic staff or other student that results in an unfair advantage or privilege being given to an employee or student and affects the student's performance, promotes malpractice.

3.5. *Plagiarism*, see provision 4 of this Regulation.

4. Plagiarism

4.1 Plagiarism is copying, in whole or in part, the thoughts, ideas, research, intellectual works of other author(s) and presenting them as one's own, without citing the author's name or source.

1.2. The main forms of plagiarism are:

- ներկայացնել ուրիշի կամ համատեղ իրականացված աշխատանքը որպես սեփականը,
- օգտագործել նախկինում հրապարակված նյութեր՝ առանց հղումներ կատարելու,
- կրկնօրինակել այլ հեղինակի աշխատանքը՝ առանց նշելու աղբյուրը,
- մեջբերումներ կատարել՝ չնշելով աղբյուրը,
- հղումներ տալ ոչ բոլոր մեջբերումներին,
- կատարել սխալ ձևակերպված կամ կեղծ հղում,

- presenting someone else's or joint/group work as your own,
- using previously published material without making references,
- duplicating the work of another author without mentioning the source,
- quoting without citing the source,
- not providing links to all quotes,
- making an incorrect or false link.

4.3 Աշխատանքների յուրօրինակության հնարավորինս ապահովման նպատակով ԵՀ-ում կիրառվում է յուրօրինակության սանդղակ և ստուգման էլեկտրոնային ծրագիր:

4.3 In order to ensure the uniqueness of the work as much as possible, the EU applies an originality scale and an electronic verification program.

5. Ակադեմիական ազնվության խախտման դեպքում

5. In case of violation of academic integrity the following measures are taken:

5.1 Ուսանողի աշխատանքը գնահատվում է «0» միավոր՝ առանց աշխատանքը վերահանձնման հնարավորության, եթե ավարտական, ամփոփիչ, անհատական կամ կուրսային աշխատանք ներկայացնելիս ուսանողը կիրառել է ակադեմիական անազնվության ձևերից մեկը:

5.1 A student's work is graded "0" without the possibility of resubmitting the work, if the student has engaged in one of the forms of academic dishonesty when submitting a graduation, final, research or course paper.

5.2 Մինչև վերջնական հանձնելը խախտումների բացահայտման դեպքում, այդ թվում՝ գրագողություն կամ ոչ բավարար մասնակցություն աշխատանքի իրականացմանը, ուսանողը պարտավորվում է կրկին անդրադառնալ աշխատանքին և իրականացնել շտկումները:

5.2 Before the final submission, in case of detection of violations, including plagiarism or insufficient participation in the implementation of the work, the student undertakes to refer to the work again and implement the corrections.

5.3 Կրկնակի խախտման դեպքում ուսանողի հեռացման հարցը դրվում է ռեկտորատի քննարկմանը:

5.3 In case of a double violation, the question of expulsion of the student is submitted to the Rectorate for discussion.

6. Ամփոփիչ դրույթներ

10.1 Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Գիտխորհրդի հաստատման և հրապարակման պահից:

10.2 Տեքստերի միջև հակասությունների դեպքում գերակայությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. Final provisions

6.1 This regulation comes into force upon approval and publication by the Scientific Council.

6.2 In case of contradictions between the texts, the priority is given to the Armenian version.